ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 33

«15» հուլիսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 5531.4 թիվը փոխարինել 1359.4 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 03, խումբ 1, դաս 1 (ոստիկանություն) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 250.0 թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 1, դաս 1 (հանգիստ և սպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից 0 թիվը փոխարինել 60.0 թվով:

4. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 4 (այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 0 թիվը փոխարինել 70.0 թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 1, դաս 1 (հանգիստ և սպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 0 թիվը փոխարինել 100.0 թվով, 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 459.2 թիվը փոխարինել 3571.2 թվով:
6. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի 11000.0 թիվը փոխարինել 11500.0 թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 80.0 թվով:

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ - ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
15 հուլիսի 2014 թվական